



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ը
ՈՐՊԵՍ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐ» ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը, ուսումնասիրելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահ Վ. Հովսեփյանի միջնորդությունը

Պ Ա Ր Զ Ե Ց

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումներն ավարտված են և դատական իշխանությանը վերաբերող բոլոր ինստիտուտները գործում են: Ձևավորվել և գործում են դատական իշխանության ինքնակառավարման մարմինները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և օրենքներով նախատեսված իրենց լիազորություններն են իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտը:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ կյանքի կոչված լինելով կանգնելու օրենքի, ճշմարտության և արդարության պաշտպանի դիրքերում՝ դատավորը միշտ էլ հարգված դեմք է եղել Արցախի հասարակության մեջ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

Սահմանդրությունից բխող իշխանության երեք ճյուղերի համատեքստում, հաշվի առնելով դատական համակարգի աշխատողների նշանակալից ներդրումը սահմանադրական կարգի ամրապնդման օրինականության ապահովման, անձի օրինական իրավունքների և շահերի պաշտպանության բնագավառներում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների հեղինակությունը և գործունեությունը բարձրացնելու համար, պետական մակարդակով առանձին օր սահմանելը միայն ու միայն կբարձրացնի դատարանների հեղինակությունը և անհրաժեշտ նախապայման կհանդիսանա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դատական իշխանության լիարժեք կայացման, արդարության իրականացման և դատական համակարգի հանդեպ ժողովրդի վստահության աճի ավելացման ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահ Վ. Հովսեփյանի միջնորդությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հունվարի 20-ը որպես «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական համակարգի աշխատողի օր» նշելու մասին միջնորդությամբ դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ

24 դեկտեմբերի 2010թ.

ք. Ստեփանակերտ